5· Նողաց...
6· Դանիէլ·

ԾԱՆՕԹ.— Մխիթ· Սա· 51· Կարդում է «որդի Աբէլեայ ի Թվ· ՌԱ· միաբանեցաք», որ միանգամայն կասկածելի է· Թէպէտ մեր ընթերցումը տողի վերջին բառերի համար նոյնպէս անհաստատ: Երրորդ տողում «Գեղարդիս», «զխաչս»· վեցերորդ տողում «Դանիէլ» գրիչն է, չունի Մխիթարեան:

ՑԱՒԵԼՈՒԱԾ Ա· 115·
Բ· Գիրք 92·

ԳԵՂԱՐԴ

Աստուածածնի բարայրի հարաւային կողմը մի կամարի վերայ·

Շնորհիւ Այ ես Վարդաբուտ սնել ի սբ ուխտս ետու: Խ: դեհկի Արթզա... հողն եւ: Ի: դեհ Շուշնա: Զ: առու այգի եւ խոստաց...

ԾԱՆՕԹ.— Մխիթարեան Սա· 52· «ես» չունի· «սնել»-ի փոխարէն «նահսդել» ?, «ետու» չունի· «հողն» բառից առաջ կարդում է «գիւղի», «Շուշան զալու» սխալ է:

ՑԱՒԵԼՈՒԱԾ Ա· 116·
Բ· Գիրք 92·

ԳԵՂԱՐԴ

Տաճարի եւ վիմափոր ժամատների հիւսիսային կողմն եղած վիմափոր խցերից մեկի պատին:

Ի թուիս: Զթ: Գրիգոր
էս եւ Վրթանէս եղբաւորդիք
Մխիթար սարգա: զմատուռն փորե
ցաք յիշատակ մեզ եւ ննջէլոց (s!) մեր
ոց յիշեցէք յաղաւթս ձեր:

ԾԱՆՕԹ.— Մխիթ· Սա· 43:

ՑԱՒԵԼՈՒԱԾ Ա· 117·*
Բ· Գիրք 118· պատկ· 164·

ԳԵՂԱՐԴ

Մխիթար Այրիվանեցու բարայրում·

1· †Ի փառս քո Քս Ած: մե ր ի գթութի հ
2· աւ ր եւ հոգոյդ ար բո: Ես բա զ մա մե զ
տր Մխ վդ
3· չ ին եցի զանա պա տս: Եւ ան ու անե ցի
ժ ամ ա տ (?)·
4· ա նս տե դի ան ս բա զ աղաւ թի ց բնա-
կեց ա ի սմա աւուր?
5· իդ· կ ան ոնաւք: բա յց Թ· ըն թե ըց ու մն
կա մ հո գե չա
6· հ բա նի ի նցն: աղաչեմք զ ամ ե նե սե ան
յիշե (լ)
7· զ մե զ առաջի Քի զիշ խան ն մե ր զ Պռ աւ չ
ե (ւ)
8· զ աւ ր նե լ զ աւ ակս ն որ ա: Թվ: ՉԼԸ ի
հա (s!) գրո (յ)
9· ս: ՊԿԹ: իմ եր ոյնի Գր իդ որ է: ՋՁԵ:
ի Քի ծնն դե նէն
10· ՌՄՂԱ: Ա դամա ՑՆՁԹ: փքը: թի:
ՄՁ (ձ) Կէ ամ մե ըց
11· կա ? ապա ? կա տ արծ աչխ ար հի
12· Տր ց ու Գր ... (յիշեց)էք ի Քս:

ԾԱՆՕԹ.— Երկրորդ տողի վերջում «վդ» բառից երեւում է վ եւ դ-ի քիչ մասը, կոտրած է:

Երրորդ տողի վերջին տառը փչացած եւ կասկածելի, մնացորդն աւելի նման է կ-ի քան տ-ի:

Չորրորդ տողի վերջին բառը «աւուր» աղօտ է եւ կասկածելի:

Հինգերորդ տողի Ա-ի բնորոշ գծիկը կոտրած· կոտրած է եւ վեցերորդի վերջին լ տառը, ինչպէս եւ եօթերորդի վերջին եւ-ի ւ-ը: Ութերորդի վերջին երկու բառը իններորդի առաջին տառի հետ կարդում ենք «ի հայ գրոյս»· ձեռագիրների մէջ եւս պատահում է նման դէպքերում յ-ի կրճատում· երկրորդ «գրոյս» բառի յ կոտրած է:

Տասներորդ տողում պէտք է կարդալ Ադամա, թէեւ գրուած է կրճատ՝ Ադամ· ա պիտի կրկնել: Նոյն տողում ՄՁ թուականից յետոյ նկատւում է մի եղծուած ձ, որ փակագծի մէջ ենք դրել, գրիչն է սխալուել եւ ապա եղծել:

Տասն եւ մէկերորդի առաջին երկու բառերը կասկածելի· կատարած գրուած է կրճատ, պէտք է կրկնել ա-ն երրորդ անգամ:

Արձանագրութեան վերայ նկատուած ճեղքը, ինչպէս տակի փոսը Խաչիկ վարդապետի գլխի մօտ, գրութիւնից յետոյ է գոյացած, հաւանօրէն երկրաշարժի հետեւանքով· որովհետեւ շատ տառերը երկուսի են բաժանուած, իսկ վերջին տողի կէտերով նշանակած մասն էլ կոտրուած է եւ պակաս, որ այդպէս լինել կարող չէր գրութեան ժամանակ: